ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

HEAD OF STAFF

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail headofstaff@edu.am, www edu.am

N 04/07.2/1670916 «24» 12 2016թ.

«Հետք» էլեկտրոնային պարբերականին
էլ.հասցե՝ info@hetq.am, hetq@hetq.am./

2016 թվականի դեկտեմբերի 6-ին «Հետք» էլեկտրոնային պարբերականում տպագրված «Առաջընթաց ուսուցման ոլորտում. «Նոր դասագրքից քսերոքս ենք անում և տալիս աշակերտին» հոդվածի վերաբերյալ հայտնում եմ, որ սկսած 5-րդ դասարանից հանրակրթական դպրոցների դասագրքերի հայտագրման գործընթացը, տպագրության աշխատանքները և բաշխումն իրականացնում է «Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամ»-ը: «Հետք»-ում տեղ գտած նյութն ուսումնասիրելու նպատակով կատարվել է գրավոր հարցում ԴՏՀՏՇՀ-ին: Պարզվեց, որ 2012 թվականին՝ հինգ տարի օգտագործման ժամկետով տպագրված, 8-րդ դասարանի <<Հայոց լեզու>>, <<Գրականություն>>, <<Հանրահաշիվ>> և <<Երկրաչափություն>> առարկաների դասագրքերից Ալավերդու թիվ 5 ավագ դպրոցի կողմից պատվիրվել է համամասնորեն 13-ական դասագիրք: Այդ թվաքանակով դասագրքերը հինգ տարի բավարարել են դպրոց հաճախող աշակերտներին: Հետագայում աշակերտների թվաքանակը ավելացել է, բայց դպրոցի տնօրինության կողմից լրացուցիչ քանակի պահանջարկ չի ներկայացվել, որի արդյունքում դպրոցում առկա դասագրքերի քանակը չի բավարարում դպրոց հաճախող աշակերտներին: Դպրոցի կողմից դասագրքերի լրացուցիչ քանակի պահանջարկի դեպքում այլ դպրոցներից տվյալ դպրոցին տրվում են ժամանակավոր օգտագործման դասագրքեր:

ԴՏՀՏՇՀ-ն բանավոր տեղեկացրել է նախարարությանը, որ Ալավերդու թիվ 5 դպրոցին ներկայացրել է առաջարկ՝ իրականացնել լրացուցիչ հայտագրում դասագրքերի անհրաժեշտ քանակի վերաբերյալ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՆԱԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատ.՝ Կ.Բաբայան
Հեռ. 524777